

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Մյունխի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հունիս

2022թ.

Յ Գորիս Ջ

30.06.2022 թ.

Գորիս քաղաքում հասարակական տրանսպորտը թանկացել է 50 դրամով

Երկու օր է Լաստ Լրատվականը զանգեր և նամակներ է ստանում, որ Գորիսում քաղաքային տրանսպորտը թանկացել է 50 դրամով: Նախկին 50 դրամի փոխարեն երթուկներն այժմ վճարում են 100 դրամ: «Թանկացման պատճառները մի քանիսն են,-հեռախոսագրույցի ընթացքում մեկնաբանեց Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը: -Առաջինը վառելիքի ռեկորդային գներն են: Մենք մինչև հիմա փորձել ենք պահել բալանսը, որ մեր բնակիչների բյուջեի վրա չազդի և չենք թանկացրել: Հիմա մենք մրցույթ ենք հայտարարել և ոչ մի ընկերություն չի համաձայնել ապահովել նման գնով սպասարկումը: Ստիպված գինը բարձրացվել է, որ մրցույթին մասնակցեն համապատասխան ընկերությունները»:

«Լաստ» ՄՊԸ գործադիր տնօրեն Սմբատ Արզումանյանը, որը սպասարկում է Գորիսի թիվ 1, թիվ 2 և Գորիս-Քարահունջ երթուղիները, հաստատեց. «Այո, մենք ենք դիմել, քանի որ 50 դրամով չէինք կարողանում լուծել անգամ վառելիքի խնդիրը: Համեմատության կարգով ասեմ, որ անցած անգամ, երբ շահել ենք տենդերը, վառելիքի գինը 270 դրամ է եղել, որն այժմ 640 դրամ է: Գումարեք դրան որ բոլոր պահեստամասերը նույնպես թանկացել են, գումարած աշխատավարձերը և սպասարկման ծախսերը: Մի խոսքով իրոք անհնարին էր նման գումարով աշխատելը: Մի բան էլ ավելացնեմ վերջին 7 տարվա ընթացքում, բացի Գորիսից, Հայաստանում չի եղել որևէ քաղաք, որ 50 դրամով սպասարկեն տրանսպորտային միջոցները»:

Վերջին մի քանի ամսվա ընթացքում տեսանելի թանկացումները խնդիրների առջև են կանգնեցրել շատերին: «Թեև թվում է, որ 50 դրամը եղանակ չի փոխում, սակայն հաշվեք ամեն օր գնալ-գալու համար 100 դրամի ավելացումը միայն տրանսպորտի մեջ, բավականին նկատելի է իմ ծախսերում,- ավելացրեց բնակիչը»:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3OzGWpj>

29.06.2022 թ.

ՏՈՒՎԵՑ ՎԱՀԱՆԱՎԱՆՔ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 1111-ԱՄՅԱԿԸ

2016 թ. դեկտեմբերին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վրդ. Հակոբյանի տնօրինությամբ և օրհնությամբ Վահանավանքը դարձավ վանական գործող համալիր, և ավելի քան վեց դար դադարից հետո այնտեղ հոգևոր ծառայության նշանակվեց նոր քահանա՝ հանձին արժանապատիվ տեր Ավետիք քին. Մարտիրոսյանի, իսկ 2018 թ. հայր Մակարի օրհնությամբ «Ս. Գրիգոր Լուսավորչի ելն ի վիրաբ» տոնի օրը հռչակվեց Վահանավանքի ուխտի օրը:

Այս տարի Լուսավորչի տոնին հաջորդող շաբաթ օրը՝ հունիսի 25-ին, Սյունյաց թեմի օրհնությամբ և Կապանի համայնքապետարանի աջակցությամբ մեծ հանդիսավորությամբ նշվեց Վահանավանք վանական համալիրի հիմնադրման 1111-ամյակը:

Դեպի Վահանավանքի վանական համալիր ուխտի ուղին, որ մեկնարկեց Կապանի Հալիձոր թաղամասի կամրջի հարակից տարածքից, առաջնորդում էր հոգեշնորհ տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը: Ուխտավորների շարքերում էին համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, Հայաստանի տարբեր վայրերից և թեմի տարբեր համայնքներից եկած հավատավոր մի խումբ անձինք, բազմաթիվ մտավորականներ և հասարակական գործիչներ: Նրանք, սրբերի բարեխոսությունը հայցելով, աղոթքի երկար ուղի անցան՝ մասնակիցը դառնալու ուխտի Սուրբ Պատարագին, որ մատուցվեց հոգեշնորհ տեր Մակար վրդ. Հակոբյանի ձեռամբ և թեմի հոգևորականաց դասի մասնակցությամբ: Հավարտ պատարագի կատարվեց Անդաստանի կարգ, որի ընթացքում օրհնվեցին Սյունյաց աշխարհի չորս ծագերը:

Ներկաները հետաքրքրությամբ ունկնդրեցին հայր Մակարի քարոզը, որից հետո շնորհավորանքի խոսքով հանդես եկան պատարագին ուխտավորաբար ներկա համայնքապետը, քաղաքական և հասարակական մի շարք գործիչներ:

Իրենց քաղցրահունչ երգեցողությամբ և հեզաճկուն պարով միջոցառումն առավել գեղեցկացրին «Գեղարդ» երգչախումբը և Կապանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական խմբերը: Օրն ամփոփվեց մատաղի օրհնությամբ և հյուրասիրությամբ:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3ywR9x9>

28.06.2022 թ.

Մարտահրավերների դեմ՝ Դավիթբեկաբար

Լույս է տեսել 2021 թ. մարտի 30-ից ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ հրատարակվող «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսի 6-րդ համարը՝ նվիրված Դավիթ Բեկի գլխավորությամբ Սյունիքի ազգային-ազատագրական պայքարի 300-ամյակին: Իրադարձություն, որը լեզենդար գահերեց զորավարի ժամանակներից սկսած՝ բազմաթիվ հերոսներ է ծնել ու դաստիարակել իր օրինակով, սոզորել է հպարտության ու անպարտելիության, հայրենիքին ու պետությանը հավատարմության զգացումներով: Ըստ իս՝ այն բանում, որ նախորդ դարի սկզբներին Սյունիքը, ի տարբերություն Արցախի ու Նախիջեւանի, կարողացավ միավորվել մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ, մեծ է հենց Դավիթ Բեկի ավանդը, ում կյանքն ու գործը օրինակ են դարձել հայրենասեր ուժերի համար: Եվ պատահական չէ, որ «կուտակված սեւ ամպերի» դեմ խոյացած հերթական շանթ-կայծակը՝ Գարեգին Նժդեհը, 1920 թ. օգոստոսի 25-ին հիմնած միությունն անվանեց «Դավիթբեկյան ուխտեր»: Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում Նժդեհի զինվորները Դավիթ Բեկի անունով երգվեցին «հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատությանը, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»: Ուխտերի նշանաբանն էր՝ «Հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար»: Եվ հենց Դավիթբեկյան Ուխտերի օրինակով էր, որ Նժդեհը հետագայում հիմնադրեց Ցեղակրոն Ուխտերը: Իսկ հայ զինվորները մարտի էին նետվում «Մեզ հետ է Աստված եւ Դավիթ Բեկի վրիժակ հոգին» կարգախոսով:

Հայոց կյանքում ազատասեր, հայրենասեր հայ մարդիկ շատ են եղել: Հայկի զավակները պատմության ընթացքում հազարավոր անգամներ են ապացուցել, որ ազատությունը վեր են դասում անգամ սեփական կյանքից: Բայց ազատասերներն ու հայրենասերները մեծ են դառնում այն ժամանակ, երբ ազգին օգնում են ոչ միայն իրենց կենդանության օրոք, այլև մահից հետո: Դավիթ Բեկը, ով այսօր էլ դրոշ է հայության կյանքում, այդ մեծերից մեկն է ու այսօր էլ ապրում է մեր մեջ ու մեր ազգային նպատակներում: Նա կապրի միշտ:

Հանդեսը հենց այս տրամաբանությունն է ձգտում փոխանցել ընթերցողներին՝ 56 էջանոց թողարկման առաջին՝ գունավոր էջում հրապարակելով քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի՝ Դավիթ Բեկի կապանյան հուշարձանի լուսանկարը: Աղեղի պես պրկված Բեկը նետվում է դեպի թշնամին... Նա նստած չէ թամբին, այլ ճախրում է օդում՝ կարծես ձգտելով առաջ անցնել իր ձիուց եւ պատրաստելով իր հզոր զարկը:

Զարկ, որն արդեն 300 տարի արձագանքում է սյունյաց լեռներում եւ հնչում է որպես մարտակոչ... Սուրը դեռ հանված չէ պատյանից, բայց քանդակագործը շեշտը դրել է ձեռքի վրա, որն առաջ է պարզված եւ մատնացույց է անում հարվածի սլացքի ուղղությունը: Իսկ ողջ համարի խորագիրը՝ «Դավիթ Բեկ. մեր գահերեց զորավարը՝ առասպելացած, մեր անպարտելի ոգու այսօրեական ու մշտնջենական խորհրդանիշը», աղերսներ ունի նաեւ այսօրվա իրականության հետ: Հանդեսի գլխավոր խմբագիրը՝ Սամվել Ալեքսանյանը, հստակ գիտակցում է, որ հայ ժողովուրդը Դավիթ Բեկի պես առաջնորդի կարիք ունի հիմա, նաեւ կարծես կանխատեսում է, որ ապագայում նույնպես մարտահրավերներ կլինեն, որոնց դեմ պետք է դուրս գալ... Դավիթբեկաբար:

«Պատմական այդ իրադարձությանն անդրադառնալու պատճառը հերթական տարեկիցը չէ սուկ: Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական կռիվներն աներկբա վկայությունն են Սյունյաց աշխարհի զավակների, մեր նախնիների ազատասիրական ոգու, որը փոխանցվել է սերնդեսերունդ, որի արժանավոր շարունակողը պարտավոր ենք լինել մենք՝ ժամանակակիցներս,- գրում է Սամվել Ալեքսանյանը:- Դավիթ Բեկի հերոսամարտը յուրօրինակ նախապատմություն է մեր օրերում տեղի ունեցած եւ տեղի ունեցող իրադարձությունների»:

Դավիթ Բեկի ազգային-ազատագրական շարժման պատմությունը ներկայացնելու համար հանդեսը հենվել է հավաստի աղբյուրի՝ Ղուկաս Մեբաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն կապանցիների» աշխատության վրա, հատվածներ է ներկայացրել Բաֆֆու «Դավիթ Բեկ» եւ Սերո Խանգաղյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպերից, հրապարակել է Նիկողայոս Ադոնցի «Դավիթ Բեկի» պատմական հիմքն ու գաղափարախոսական արժեքը» աշխատությունը, Սեւակ Արզումանյանի «Սերո Խանգաղյանի «Մխիթար Սպարապետ» վեպի մասին» հոդվածը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանն անդրադարձել է Դավիթ Բեկի կերպարին հայ օպերային արվեստում, մասնավորապես՝ Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերային, իսկ արվեստագիտության թեկնածու Սիրանույշ Գալստյանը ներկայացրել է Դավիթ Բեկի կերպարը հայ կինոյում: Քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանը գրել է 1720-ականների Սյունյաց իշխանապետության տեղագրության մասին, Հովհաննես Այվազյանը քննարկել է Դավիթ Բեկի ծագումնաբանության շուրջ հարցերը: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանը գրել է Բաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպի մասին՝ պատմական իրադարձությունների վերլուծության միջոցով եզրակացություններ կատարելով նաեւ այժմյան իրավիճակի համար:

Հրապարակված այլ նյութերը վկայում են, թե Դավիթ Բեկը որքանով է ներկայացված հայոց կյանքում: «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը տարբեր օրերին ուխտագնացություններ է կազմակերպել Դավիթ Բեկի զինակիցներ Առաքել գորագլխի, Բալի, Սարգիս գորավարների, Թորոս իշխանի շիրիմներին: Չի մոռացվել նաեւ արծվանիկցի դավաճան մելիք Ֆրանգյուլը, ում գերեզմանին այցելությունը նախորդ սերունդների անեծքներին իր նզովքը միացնելու նպատակ ուներ: «Երեք հարյուր տարի շարունակ այդ վայրը եղել է դավաճանի հանդեպ սյունեցու հոգու զայրույթն ու ատելության մաղձը պարպելու տեղ: Այդպես է նաեւ այսօր: Այդպես է լինելու հավերժ»,- գրում է հանդեսը:

«Ժամանակները փոխվել են, բայց անկախ ու ազատ ապրելու խնդիրները մնում են, որոնք թե ներքին են, թե արտաքին: Ներքինը վերաբերում է համազգային միաբանությանը, արտաքինը՝ թուրք-ադրբեջանական սադրանքներին, որոնց թիկունքում նաեւ մեծ երկրների շահերն են: Ինչ անել՝ ծնել մի նոր Դավիթ Բեկ, դա իր հերթին, անձնագոհ, նվիրված հայը միշտ էլ պետք է ժողովրդին, եւ նրանցից շատերը հերոսացան Արցախյան առաջին պատերազմում»,- նշում է Դավիթ Գասպարյանը՝ ավելացնելով, որ թշնամիները նույնն են, արտաքին վտանգները՝ նույնպես, խորանում է ներքին անմիաբանությունը, ինչի պատճառով ազգային վիճակը չի կայունանում:

«Բավական է: Պատմությունն ու Դավիթ Բեկը մեզ սթափության են կոչում: Բոլոր մանր անձնական, նեղ կուսակցական շահերը թողնենք մի կողմ եւ ուժ գտնենք միաբանվելու եւ համատեղ ելք որոնելու: Ինչպես ժամանակ առաջ, հիմա էլ հայրենիքը մեզ է կանչում»,- շեշտել է Դավիթ Գասպարյանը, ում համոզմամբ՝ «զբոսայցային մերդիվանագիտությունը պետք է դառնա գործնական եւ խնդիրներ լուծի», իսկ «ազգային չկայացվածությունից բխող խեղճությունը, որն ամենուր է, կոտրում է ժողովրդի ոգին»:

«Մյունխաց երկիր. մշակութային» հանդեսը պատեհ առիթի շնորհիվ «հրավիրում» է քննարկումների, 300-ամյա պատմության տարբեր ժամանակների միջև համեմատությունների անցկացման եւ եզրակացությունների կատարման: Նման նախաձեռնությունները բնորոշ են միայն հայրենասերներին, եւ ես հույս ունեմ, որ իր ազգային ակունքներին հենված Սամվել Ալեքսանյանի սկսած զրույցը նոր թափ կստանա՝ ոչ միայն իր վրա բեւեռելով հանրության գիտակից շրջանակների ուշադրությունը, այլեւ վերածվելով հնարավորության՝ ամեն տարի խոսելու Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի եւ բոլոր նրանց մասին, ովքեր ազգային արժեհամակարգի պաշտպանության խնդիրների լուծումները վերածել են հերոսական, հայրենիք պահող գեղեցիկ ավանդույթների:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/martahraverneri-dem-davitbekabar>

28.06.2022 թ.

Ամառային արձակուրդին ընդառաջ «Ռուսական գրքի տունը Երևանում» Մյունիքի մարզի 7-12-րդ դասարանների սովորողների համար նախատեսում է կազմակերպել Լև Տոլստոյի գրական և գեղարվեստական մրցույթ

Ամառային արձակուրդին ընդառաջ «Ռուսական գրքի տունը Երևանում» Մյունիքի մարզի 7-12-րդ դասարանների սովորողների համար նախատեսում է կազմակերպել Լև Տոլստոյի գրական և գեղարվեստական մրցույթ:

Որպես մրցույթի թեմաներ են ընտրվել ռուս մեծ գրողի «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդություն» եռագրությունը («Детство. Отрочество. Юность»), «Պարահանդեսից հետո» («После бала») և «Ինչո՞վ են մարդիկ ապրում» («Чем люди живы») պատմվածքները:

Մրցույթին կարող են մասնակցել պետական, մասնավոր, լրացուցիչ ուսումնական հաստատությունների և ստեղծագործական կենտրոնների 7-12-րդ դասարանների աշակերտները: Մասնակցության համար անհրաժեշտ է կարդալ նշված ստեղծագործություններից մեկի բնօրինակը, դրանից տպավորված գրել նոր պատմություն (էսսե) ռուսերենով կամ նկարել:

Աշխատանքների ընդունման վերջնաժամկետ է սահմանված հուլիսի 5-ը, իսկ արդյունքները կհայտարարվեն հուլիսի 11-ին: Աշխատանքները պետք է ուղարկել մրցույթի էլեկտրոնային հասցեին, իսկ բնօրինակները հանձնել կամ մարպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն, կամ մրցույթի համակարգող Կարինե Մովսիսյանին (ք. Գորիս):

Հասցե՝ Բրյուսովի 6, Երևան 0023 Հեռ.՝ +374 98 394884 Էլ. հասցե՝ office@liver.am

Աղբյուրը՝ <https://www.goriscity.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=2254>

27.06.2022 թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՑ ԳՊՀ ՆՈՐԸՆՏԻՐ ՌԵԿՏՈՐ ՏԻԳՐԱՆ ՎԱՆԴՈՒՆՅԻՆ

ԳՊՀ խորհրդի նախագահ Արտուշ Ղուկասյանը այսօր համալսարանի ռեկտորատի ու գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց նորընտիր ռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Վանդունցին:

Ս.թ. հունիսի 23-ին ՀՀ Կառավարությունը Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում հաստատել է մրցույթի արդյունքներով ռեկտոր ընտրված Տիգրան Վանդունցին:

Ղուկասյանը շնորհավորեց ԳՊՀ ռեկտորին՝ մաղթելով բեղուն աշխատանքային գործունեություն, ձեռքբերումներ և հաջողություններ առաջիկա տարիներին՝ ուղղված բուհի ռազմավարական խնդիրների լուծմանը: Նա շնորհակալություն հայտնեց ԳՊՀ ուսումնական

աշխատանքների գծով պրոռեկտոր Թեհմինա Մարությանին, ով 2021թ.-ի դեկտեմբերի 22-ից մինչև 2022 թ.ի հունիսի 23ը կատարում էր նաև ռեկտորի պարտականությունները:

ԳՊՀ ռեկտոր Տ. Վանդունցը շնորհակալություն հայտնեց խորհրդին վստահության համար՝ հավաստիացնելով, որ ռեկտորի պաշտոնում կներդնի առավելագույն ջանքեր՝ առկա նախադրյալների հիմքով բուհի զարգացումն ու առաջընթացը ապահովելու համար: Վանդունցը նույնպես շնորհակալություն հայտնեց բուհի նախկին ռեկտորներին, մասնավորապես բուհը 6 տարի դեկավարած Արտուշ Դուկասյանին, ով այժմ նախագահում է ԳՊՀ խորհուրդը, և պաշտոնակատար Թեհմինա Մարությանին:

«Ուրախ եմ, որ 4 տարի անց կրկին վերադարձա ԳՊՀ՝ ծառայելու նրան», - ասաց ռեկտոր Վանդունցը և բարի երթ մաղթեց հարազատ կրթօջախին:

Հիշեցնենք, որ ս.թ. մայիսի 30-ին ԳՊՀ խորհուրդը 17 կողմ ձայնով ռեկտոր էր ընտրել բուհի նախկին աշխատակից, գիտական քարտուղար, 2018թ.-ից ՀԱԱՀ-ի Միսիանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Տիգրան Վանդունցին:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/GorisSU/posts/pfbid0jeN2bNB67CAGX6wryvji9YTfgTKyLede2CYTQzbHXcQiseG5Et3qJK3uH38Q5rmQl>

24.06.2022 թ.

Շուռնուխի հենակետը. Նվիրյալ աշխատանք՝ անկախ դժվարություններից

2021 թվականի օգոստոսից Ադրբեջանը վերահսկում է Սյունիքի մարզի Գորիս-Որոտան ճանապարհի մի հատվածը, ինչի պատճառով մինչ օրս Որոտան, Շուռնուխ եւ Բարձրավան գյուղերը քաղաքի հետ հաղորդակցման խնդիր ունեն:

Երթեւեկությունը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարությունը սկսեց այլընտրանքային ճանապարհի վերանորոգում: Դժվարանցանելիության պատճառով 6 ամիս շարունակ երեք գյուղի բնակիչներին հաց էր մատակարարում Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատը: Այս տարվա ապրիլից ծրագիրն ավարտվեց, հիմա հացի խնդիրը լուծում է Որոտանում բացված հացաբուկեղենի փուռը:

Թե ինչ խնդիրներ են ունենում Որոտան-Գորիս վերանորոգվող ճանապարհով երթեւեկողները, մեր նկարահանող խումբը զգաց սեփական մաշկի վրա: Թեթեւ մարդատար մեքենաները սակավ են օգտվում այդ ճանապարհից, իսկ տաքսու վարորդները 13 կիլոմետրի համար աստղաբաշխական գումար են պահանջում:

Օգնություն խնդրեցի Շուռնուխի փրկարարական հենակետից, որտեղ անցած տարվա փետրվարից հերթապահում են Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի ծառայողները: Ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Անդրանիկ Սահակյանի հրահանգով՝ հերթափոխը կատարվեց երկու ժամ ուշացումով՝ դեպի Գորիս մեզ անվտանգ հասցնելու համար:

Շուռնուխի հենակետը վագոն-տնակ է՝ ամեն հարմարությամբ, քնելատեղով, վառարանով, փրկարարական ու առաջին օգնության անհրաժեշտ գույքով: Այստեղից երեւում է 44-օրյա պատերազմից հետո հաստատված ողջ իրականությունը. տարբեր բարձունքներից ծածանվում են միաժամանակ Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի դրոշները:

Տեղավորվեցինք փրկարարական «ՈւԱԶ» մեքենայում ու ճամփա ընկանք: Մեզ ընկերակցեց նաեւ շուռնուխցի մի ազատամարտիկ, որը ջոկատի լավ բարեկամն է: Այն օրվանից, երբ փրկարարները սկսեցին հաց մատակարարել գյուղերին, մարդիկ ճարահատյալ նրանց միջոցով էին պարեն ու դեղորայք ուղարկում ճանապարհի մյուս կողմում գտնվող իրենց հարազատներին:

Ջոկատի ավագ վարորդ, փ/ծ ավագ Արթուր Մարգարյանի համար ծանոթ է ամեն քար ու թուփը. հմտորեն շրջանցում է բոլոր դարուփոսերը: Ասում է՝ հիմնական խնդիրը ձմռանն է

լինում: Մեկուկես տարվա գործունեության ընթացքում հենակետ ահագանգել են հատկապես ՃՏՊ-ների դեպքում, ինչպես նաև Բարձրավանից Գորիսի բուժկենտրոն հիվանդ երեխաներ տեղափոխելու նպատակով:

Գորիսի ՀՓՁ-ի սպասարկման գոտում անանցանելի ու վտանգավոր տեղեր շատ կան: Վերհիշում ենք տարիներ առաջ ձորն ընկած ցիստեռնի պատմությունը, երբ վարորդը հրաշքով փրկվել էր: Փրկարարները դժվարությամբ կարողացել էին պատզարակով դուրս բերել տուժածին: «Վարորդը շոկի մեջ էր, բղավում էր, որ ոչ մեկ իր մեքենային չդիպչի: Ուզում էր անձամբ դուրս բերել, բայց մեքենան արդեն մի քանի կես էր դարձել», - պատմում է մեր շուռնուխցի ուղեկիցը, որը ականատես է եղել դեպքին ու փրկարարների հետ մասնակցել տարհանման աշխատանքին:

Վարորդին հարցնում են՝ հերթափոխից հետո ինչո՞վ է սովորաբար զբաղվում: Հանգիստ առօրյան փրկարարի համար չէ: Չես կարող անտարբեր տանը նստել, երբ ընկերներդ կրակի դեմ կռիվ են տալիս, ինչպես, օրինակ, Խնածախում տեղի ունեցած մեծ հրդեհի դեպքում: Այրվում էր միանգամից երեք տուն, կրակը տարածվում էր վայրկենական: Հրդեհաշիջման աշխատանքները տեսել են գրեթե մեկ օր:

Արթուրը կատակում է՝ երբ հասցնում է, ուղիղ տուն է գնում: Ջոկատն էլ է մի տուն, որի հարկի տակ ապրում է 35 հոգի:

Հրշեջ-փրկարար, փ/ծ սերժանտ Տիգրան Պողոսյանը համակարգում է 5 տարի: Տնտեսագետ է, թեև երբեւէ այդ մասնագիտությամբ չի աշխատել: Գործից դուրս զբաղվում է գյուղատնտեսությամբ. ազնվամորի է մշակում: Վերջերս է ընտանիք կազմել, գորիսցի աղջկա է կնության առել: Ծիծաղում է՝ բա էլ ո՞րտեղից: Որոտան, Շուռնուխ ու Բարձրավան գյուղերում ընտանիք կազմելու ու դեմոգրաֆիկ խնդիրներն ակնհայտ են: Աղջիկները հասունանալուն պես տեղափոխվում են քաղաք, իսկ քաղաքաբնակները հրաժարվում են այդքան մեկուսացված գյուղեր հարս գնալ:

«Մարդկանց մեջ վախ կա՝ հինը նորոգելու, նորը կառուցելու: Իսկ եթե նորից պատերազմ լինի՞: Ամեն դեպքում համախմբվել ու լավատես լինել է պետք» - ասում է Տիգրանը:

Պատերազմի օրերին Գորիսի ՀՓՁ-ից 10 ծառայող էր մեկնել Արցախ՝ ԱԻՆ համահավաք գումարտակի կազմում: Պատերազմից հետո բոլորն անխտիր մասնակցել են զոհված զինծառայողների դիերի որոնման ու տեղափոխման աշխատանքին: Այս դժվար օրերն էլ անցան:

Օղակի հրամանատար, փ/ծ ավագ Հայկ Պապյանը ջոկատի փորձառուներից է: 21,5 տարի ծառայում է այստեղ: Իր անցած ուղու մասին խոսել չի սիրում, միայն հավելում է՝ փրկարարի համար մարդու կյանքը գերակա արժեք է: Եթե այդ գիտակցումն ունես, ապա ամեն ինչ հաղթահարելի է: Բացի դրանից՝ ջոկատի գույքը բավականին նորացվել է. վերջին տարիներին ստացել են երկու «Իսուզու» եւ «Կամագ» մակնիշի մեքենա, որոնք արձագանքումն ավելի արդյունավետ են դարձնում:

Երկու զավակ ունի. որդին՝ 9-ամյա Գոռը, արդեն կարողանում է բոլոր փրկարարական հանգույցները կապել: Սիրում է հոր համազգեստով լուսանկարվել: Հայկ Պապյանը նկատում է՝ նոր սերունդը շատ լավն է, ակտիվ, նախաձեռնող: Պետք է ամեն ինչ անել, որ արտագաղթ չլինի. սերտացնել սահմանային գոտում ապրող մարդկանց կապը, հարգել միմյանց՝ անկախ տեսակետից: Աշխարհաքաղաքական միտումներն անընդհատ կփոխվեն, բայց եթե հայ ազգը միասնական լինի, եւ ամեն մեկն իր աշխատանքը կատարի պրոֆեսիոնալի պես, ամենալավ ապագան հնարավոր կլինի մեր երկրում կառուցել:

13 կմ ձգվող քարուքանդ ճանապարհին հաջորդում է Հայաստանի ասֆալտապատ «ողնաշարը»՝ M2 միջպետական ճանապարհը: Բաժանվում ենք ջոկատի բակում, որտեղ տղաներն արագ հերթափոխ են կատարում: Գործը սպասել չի կարող:

23.06.2022 թ.

Գորիս համայնքի Հարթաշեն բնակավայրում բացվեց մանկապարտեզ

Վերջապես կատարվեց հարթաշենցիների երազանքը՝ բնակավայրը ունեցավ մանկապարտեզ: Վարչական շենքի տարածքն առանձնացվել է, հիմնովին նորոգվել և հարմարեցվել նախակրթարանի համար: Սկզբնական շրջանում գործելու է երկու խումբ՝ շուրջ 30 երեխայի համար: Խմբասենյակները ոչ միայն նորոգվել, այլ նաև կահավորվել են:

Աշխատանքները իրականացվել է Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի(Յունիսեֆ) աջակցությամբ՝ Գորիսի համայնքապետարանի հետ համագործակցության շրջանակներում: Հարթաշենը մինչ այդ չուներ նախակրթարան, երեխաները հաճախում էին Գորիսի նախակրթարաններ, երկար ճանապարհի պատճառով հաճախ էին խնդիրներ առաջանում: Այժմ բնակավայրում

կլուծվի երեխաների զբաղվածության և զարգացման խնդիրը: Մանկապարտեզը համալրված է հաճախող երեխաների համար հարմարավետ գույքով և զարգացման համար անհրաժեշտ պարագաներով: Կարող ենք փաստել մեկ այլ կարևոր խնդիր՝ մանկապարտեզի բացումով բնակավայրում լուծվել է նաև աշխատատեղի խնդիր՝ շուրջ 5-6 աշխատատեղ կատեղծվի:

Աղբյուրը՝ <https://www.goriscity.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=2250>

23.06.2022 թ.

Հայտարարություն

«ՎԻԱ ՖՈՒՂ» ՍՊԸ պահածոների գործարանը, որը ստեղծվել է ռուսաստանաբնակ գործարարների կողմից, հրավիրում է աշխատանքի արտադրամասի բանվորուհիների: Աշխատավարձը՝ 100 000 դրամից բարձր: Ցանկացողները կարող են զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ 043 012 111,

093 955 611 կամ ներկայանալ գործարան:

Հասցե՝ գ. Սյունիք, Գաղթականների փ.62, Սյունիք 3305:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/haytarutyun-36>

22.06.2022 թ.

ԳՈՐԻՍԻ ԲԿ-Ի ԲԺԻՇԿՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ «ՈՐԱԿԻ ՆՇԱՆ» ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ
Սիրելի հայրենակիցներ!!!

Ուրախ ենք տեղեկացնել, որ Գորիսի ԲԿ-ի ընդհանուր վիրաբույժ,վիրաբուժական բաժանմունքի վարիչ Նարեկ Թունյանը արժանացել է տարվա բժիշկ մրցանակին, իսկ քիթ-կոկորդ-ականջաբան Աննա Սարգսյանը՝ տարվա երիտասարդ բժիշկ մրցանակին:

Շնորհավորում ենք մեր բժիշկներին,ցանկանում նորանոր ձեռքբերումներ:

Աղբյուրը՝

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=782509183126837&id=100323538012075

20.06.2022 թ.

Չարգացման կենտրոններ՝ Սյունիքի մարզի գյուղերի համար
Տեսանյութը՝ [այստեղ](#):

19.06.2022 թ.

Մեղրիում ծորակից անգամ խիսունջ է գալիս, ջուրը խորհրդային ժամանակների երկաթե խողովակներով է հոսում

Պարենային ապրանքներից էլ կարևոր ջրի խնդիրն է խիստ սուր Սյունիքի Ագարակ ու Մեղրի համայնքներում:

Բնակիչները պնդում են՝ սարերից եկող գուլալ ջուրը մաքրման կայաններում մի բան էլ աղտոտվում է, նոր հասնում իրենց ծորակներ: Ջրամատակարարում ապահովող «Վեոլիա» ընկերությունում անգամ չեն ժխտում՝ մաքրման կայանները քանդման ենթական են, բայց համարում են՝ իրենց պարտավորությունը չէ, պետությունը թող մտածի:

Կառավարությունում խնդիրն ուսումնասիրել են դեռ երկու տարի առաջ, նախորդ տարի նոր կայանների նախագծման աշխատանքներն ավարտել են, բայց կառուցման համար դեռ միջոցներ են որոնում: Մինչև այդ Մեղրիում և Ագարակում բնակիչները շարունակում են սարերից հոսող պաղ ջուրը եռացնել ու սառեցնել՝ հիվանդություններ ձեռք չբերելու համար:

Ապրել Հայաստանի ամենաշոգ վայրերից մեկում ու գրկված լինել խմելու մաքուր ջրից: Մեղրեցիների ու ագարակցիների արդարացի դժգոհությունը պատասխանատուներին է փոխանցել Մուշեղ Իսախանյանը՝ փորձելով լսել հարցի լուծման տարբերակներ:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3nww8MY>

19.06.2022 թ.

Տեղ գյուղի հովիվից աղբբեջանցիների առևանգած 300 ոչխարը չի վերադարձվել. պետությունը կփոխհատուցի վնասի 70 տոկոսը

Տեղ գյուղի հովիվ Սուրիկ Մաթևոսյանի մոտ 300 ոչխարները, որոնք աղբբեջանցիները առևանգել էին 6 ամիս առաջ, մինչև այժմ չեն վերադարձրել, պետությունը կփոխհատուցի վնասի 70 տոկոսը: [NEWS.am](https://news.am)-ի հետ զրույցում ասաց Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը:

«Վնասի 70 տոկոսը փոխհատուցում կտա, դա մոտավորապես կկազմի 10 մլն դրամ, այսինքն 280 գլուխ ոչխարի համար գումար կտան», - ասաց նա:

Հովիվը այժմ շարունակում է զբաղվել անասնապահությամբ, գյուղապետի խոսքով, եթե փոխհատուցում լինի նորից կավելացնի մանր եղջերավորների գլխաքանակը:

Ղուլունցը նշեց, որ իրավիճակը հանգիստ է, գյուղացիները շարունակում են իրենց գյուղատնտեսական աշխատանքները կատարել, զբաղվել անասնապահությամբ, գյուղից արտագաղթ չկա այս պահին:

Հիշեցնենք, որ հունվարի 13-ին աղբբեջանցիները առևանգել էին Տեղ համայնքի 53-ամյա հովիվ Սուրիկ Մաթևոսյանին և նրա մոտ 300 ոչխարներին: Մեկ օր անց բանակցությունների արդյունքում խաղաղապահներին են փոխանցել գերեվարված Սուրիկ Մաթևոսյանին, սակայն առևանգված ոչխարները մինչև այսօր շարունակում են մնալ աղբբեջանցիների մոտ:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/708047.html>

16.06.2022 թ.

Հունիսի 15-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն աշխատանքային այց է կատարել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Ընկերության վարչական շենքում կայացած քննարկումից հետո մարզպետը «ԶՊՄԿ»-ի ղեկավար կազմի ուղեկցությամբ այցելել է կոմբինատի բաց հանք եւ արտադրական փուլի տարբեր ենթակառուցվածքներ, շրջել հարստացուցիչ ֆաբրիկայում, այլ արտադրամասերում, ծանոթացել հանքահանումից մինչև հարստացման ու պատրաստի արտահանվող խտանյութի ստացման գործընթացին: Մարզի ղեկավարը տեղեկացել է հանրապետության հանքարդյունաբերական հսկայի արտադրական հզորությունների, տեխնիկական հագեցվածության, տնտեսական

ցուցանիշների, սոցիալական ներդրումների ու առաջիկա գործունեության ծրագրերի մասին եւս:

Կոմբինատի ղեկավարության հետ քննարկվել են նաեւ մարզպետարան-ԶՊՄԿ համագործակցության եզրերն ու հեռանկարները, ընկերության կողմից Սյունիքում իրականացվելիք սոցիալական պատասխանատվության ծրագրերի ու մարզային կյանքի այլ ոլորտներում ներդրումների ուղղությունները:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/389909166511787>

15.06.2022 թ.

Առաջիկայում կմեկնարկի Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման ծրագիրը

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Երևանի գրասենյակի ղեկավար Գեորգի Ախալկացիի մասնակցությամբ աշխատանքային այց է կատարել Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժին՝ մաքսային ծառայության աշխատանքային գործընթացի կազմակերպմանը տեղում հետևելու համար: [«Արմենպրես»](#)-ի փոխանցմամբ՝ Ռուստամ Բադասյանն այս մասին գրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում:

«Տնտեսվարողների և քաղաքացիների համար սահմանային անցակետերով դյուրին և արագ տեղաշարժ ապահովելը Պետական եկամուտների կոմիտեի առաջնահերթություններից է, և Հայաստանի հարավային սահմանային անցակետի արդիականացումը ևս կարևոր նշանակություն ունի: Առաջիկայում ԵՄ և ՎԶԵԲ ֆինանսական աջակցությամբ կմեկնարկի Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման ծրագիրը: Անցակետի արդիականացումը նոր ազդակ կհաղորդի Հայաստանի հարավային տնտեսական սահմանով իրականացվող ուղևորափոխադրումների և առևտրաշրջանառության աշխուժացմանը», - գրել է Բադասյանը:

Աղբյուրը՝ <https://www.armenpress.am/arm/news/1086043/>

15.06.2022 թ.

Քննարկվել են Սյունիքի մարզի զարգացմանն առնչվող հարցեր

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը հունիսի 14-ին ընդունել է Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինին, Եվրոպական հանձնաժողովի թիմի ղեկավար Բելլա Նեստորովային, ԵՄ պատվիրակության ու Եվրոպական հանձնաժողովի այլ ներկայացուցիչների: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) Հայաստանի գրասենյակի ղեկավար Ջորջ Ախալկացին, բանկի այլ ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում խոսվել է «Թիմ Եվրոպա» նախաձեռնության «Դիմակայունություն Սյունիք» ծրագրով մարզին տրամադրվող դրամաշնորհի շրջանակներում իրականացվելիք ծրագրերի, դրա բաղադրիչների, ինչպես նաեւ այդ համատեքստում մարզային իշխանությունների հետ համագործակցության մասին: Քննարկվել են ներդրումների առանձին ոլորտները՝ կրթություն, սոցիալ-տնտեսական զարգացում, ենթակառուցվածքներ, ՓՄՁ զարգացում, բնապահպանություն ու էներգաարդյունավետություն, Արցախից տեղահանվածների խնդիրների լուծում եւ այլն:

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի աշխատակիցները ներկայացրել են կառույցի կողմից իրականացվող Մեղրու սահմանային անցակետի արդիականացման եւ

վերակառուցման ծրագիրը: Քննարկվել է նաև բանկի մասնակցությամբ Հյուսիս-Հարավ նախագծի Միսիան-Քաջարան ճանապարհահատվածի շինարարության հարցը:

Ռոբերտ Ղուկասյանը ողջունել է պատվիրակության այցը Սյունիք ու նշել այն առաջնահերթությունները, որոնք պետք է լինեն ԵՄ ներդրումներով նախատեսվող ծրագրերի հիմքում: Մարզի ղեկավարը նաև փոխշահավետ ու գործընկերային սերտ համագործակցության պատրաստակամություն է հայտնել:

Անդրեա Վիկտորինը տեղեկացրել է այն ծրագրերի մասին եւս, որոնք այս պահին ԵՄ աջակցությամբ իրականացվում են մարզում:

Պատվիրակությունը Սյունիքում է երկօրյա այցով ու տարբեր բնակավայրերում հանդիպումներ կունենա:

Աղբյուրը <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/389181083251262>

15.06.2022 թ.

Միսիան և Գորայք համայնքների միավորումից կատեղծվի Միսիան համայնքը

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու համար Կառավարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, որով առաջարկվում է մի շարք մարզերում ձևավորել համայնքային փնջեր:

Առաջարկվող ծրագրում ներգրավված է 13 համայնք, 141 բնակավայր, որոնց միավորման արդյունքում կձևավորվի 5 համայնք:

ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է Կառավարության ներկայացրած նախագիծը, որի համաձայն փոփոխություններ է կատարվել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքում:

Ըստ այդ փոփոխությունների՝ Սյունիքի մարզում Միսիան և Գորայք համայնքների միավորումից կատեղծվի Միսիան համայնքը՝ 36 բնակավայրով, 31.5 հազար բնակչությամբ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/sisian-ev-gorayq-hamaynqneri-miavorumits-kstekhtsvi-sisian-hamaynqy>

14.06.2022 թ.

ՆՇՎԵՑ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 123–ԱՄՅԱԿԸ

Իմաստախոսությունն ասում է՝ «Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող միլիոնավոր ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական: Եվ դա մարդկության աստեղային ժամն է»: Հայ ժողովրդի համար այդ աստեղային պահերից մեկն էլ 1899 թվականի հունիսի 13-ն էր՝ հայ արձակի բյուրեղային վարպետներից մեկի՝ Ակսել Բակունցի ծննդյան տեսլաժամը:

Այսօր Գորիսում մեծ շուքով նշվեց մեծանուն արձակագրի ծննդյան 123-ամյակը: Միջոցառումները մեկնարկեցին Բակունցի հուշարձանի մոտ ծաղկեղբման արարողությամբ, ապա շարունակվեցին գրողի տուն–թանգարանում:

Բակունցի լուսաճառագ հարկի տակ հավաքված պաշտոնատար անձինք՝ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի գլխավորությամբ, մտավորական ընտրանու ներկայացուցիչները, մայրաքաղաքից ժամանած հյուրերը, որոնց թվում՝ մայր թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը, Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը, գրականագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Դ.Գասպարյանը և ուրիշներ, իրենց ելույթներում շեշտեցին Բակունցի ստեղծագործության պատմական նշանակությունը, կարևորեցին բոլոր այն ձեռնարկները, որոնք միտված են նրա գրական հեղինակության ամրապնդմանը, ստեղծագործության

հանրայնացմանը և սերունդներին Բակունցի իմաստուն ու լուսավոր մտքի ճանապարհով ուղղորդելու առաքելությանը:

Օրվա առթիվ Բակունցի տուն–թանգարանը Գորիս համայնքի, նաև մյուս համայնքների մշակութային, կրթական ու ստեղծագործական կառույցների համատեղ ուժերով բակունցասերներին ներկայացավ միջոցառումների հարուստ ծրագրով: Այցելուները անգնահատելի հնարավորություն ունեցան հաղորդակցվելու Բակունցի՝ «մյուռոնի նման սրբազնագույն» աշխարհին, ներշնչվելու նրա հոգևոր ներկայությամբ:

Օրվա առթիվ թանգարանում բացվեց նոր, բացառիկ ցուցադրություն՝ «Հովհաննես Թումանյանի ծննդավայրը Ակսել Բակունցի լուսանկարներում» խորագրով: Առաջին անգամ ցուցադրվեցին 1932թ.-ին Բակունցի կողմից Դսեղում արված և մայր թանգարանի Թումանյանի ֆոնդում պահվող արխիվային լուսանկարները՝ հեղինակի ձեռագիր նշումներով: Ցուցադրությունը ներկայացրեց նախաձեռնության հեղինակ, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարությանը: «Այս լուսանկարները թանգարանում ցուցադրվող լուսանկարչական սարքով գրողի կողմից արված բացառիկ գտածոներ են: 1932 թվականին Բակունցը Հովհաննես Թումանյանի դստեր՝ Նվարդի հետ այցելել է Դսեղ և լուսանկարել իր սիրելի բանաստեղծի ծննդավայրը»,–նշեց Մարությանը և հավելեց, որ Բակունցի ծննդյան օրվա առթիվ ցուցադրության են նախապատրաստվել այդ լուսանկարներից միայն 9–ը, որովհետև հստակ գրառումներ ու թվագրումներ ունեն, իսկ մյուս 10–ը հեղինակային հստակեցման, լրացուցիչ ճշգրտման կարիք ունեն, որից հետո հնարավոր կլինի ամբողջացնել հավաքածուն և ցուցադրել ամբողջությամբ:

Հ.Իգիթյանի անվան գեղագիտության կենտրոնի Գորիսի մասնաճյուղի տնօրեն, գեղանկարիչ Արամ Մաշուրյանի ջանքերով Բակունցի հարկի ներքո կյանքի կոչվեց ևս մեկ կարևոր իրադարձություն: Գորիսը գեղանկարիչների մի փայլուն համաստեղություն է սովել, որոնց շարքում առանձնանում է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գուրոսը և նրա ոչ պակաս տաղանդավոր որդին՝ Գևորգ Պարոնյանը: Տևական ժամանակ անց նրա ժառանգների պատրաստակամության արդյունքում թանգարանում բացվեց Գևորգ Պարոնյանի ցուցահանդեսը:

Օրվա խճանկարին վառ գույներ հաղորդեցին Տաթևի վանական համալիրի «Տաթևի զանգակներ» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Մարգարյան), Գորիսի «Լիլի Նարինյան» պարային համույթը (գեղ.ղեկավար՝ Լիլի Նարինյան), «Վահե Մելքունյան» երգի ու պարի դպրոցի վոկալ խումբը (գեղ.ղեկավար՝ Վահե Մելքունյան), Խնձորեսկի Ա.Սաթունցի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Սոնա Մանվելյան):

Հյուրերը գրողի ստեղծագործությունների բույրն ու հմայքը մեկ անգամ ևս վայելեցին Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի աշակերտների շնորհիվ, որոնք հանդես եկան Բակունցի գրական դիմանկարն ամբողջացնող գեղարվեստական կոմպոզիցիայի մատուցմամբ (ուսուցչուհի՝ Գոհար Մկրտչյան):

«Ալպիական մանուշակ» երգի կատարմամբ Բակունցյան օրվան ծաղկաբույր լիցքեր հաղորդեց գորիսեցի ճանաչված երգիչ Արկադիա Մարդյանը:

Միջոցառումների շարքը ամփոփվեց մի գեղեցիկ իրադարձությամբ: Գեղանկարիչ Սևադա Գրիգորյանը իր վրձնած «Ակսել Բակունցի դիմանկարը» նվիրեց գրողի տուն–թանգարանին:

Միջոցառումը գեղեցիկ բեմագրով վարեցին Գորիսի պետական համալսարանի շնորհաշատ ուսանողները՝ ՈԻԽ նախագահ Գուրգեն Հարությունյանը և Մելանյա Թևոսյանը:

Երեկ, այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից Դու մեզ հետ ես, մեր աչքերի մեջ ու մեր հայացքի առջև, քո տանն ես՝ իբրև հավերժական տանտեր և դարձյալ մեզ հետ գեղարվեստական խոսքի քո՝ եղանակն է, քո խոսքի՝ հազարը: Եվ այս փոթորկահույզ օրերին քո ոգու նշանի ներքո չկա՝ նահանջ, չկա՝ պարտություն, որովհետև դու քո «հերոսական

կենսուղին» անցար առանց ետ շրջվելու, քո ցեղի նահատակաց ու ողջերին քո գիրկն առած, նրանց խինդ ու լացը քո սրտի խորերում պահած...

Դու քո կենդանի տաճարը կառուցեցիր գրիվ և հավերժության համար, և որտեղ ոգեղեն հացը իրավամբ բաշխվում է ձրի, ձրի, քանզի դրա համար դու հատուցել էիր կանխավ և հատուցել էիր կյանքով: Եվ սրբազան է հար տառապանքով ծնված Ճշմարտությունը քո՝ դարեդար և սերնդեսերունդ. «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սներես չմնա...»:

Ծնունդդ շնորհավոր, Մե՛ծ Գործեսցի...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nshvets-aksel-bako%D6%82ntsi-tsnndyan-123amyaky>

09.06.2022 թ.

Հյուսիս-Հարավ ծրագրի շրջանակում Սյունիքի 8 բնակավայրերի 982 հողամասեր հանրության գերակա շահ ճանաչվեցին

Կառավարությունն իր այսօրվա՝ հունիսի 9-ի նիստում որոշեց Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչել:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ իրավական ակտի ընդունման նպատակն է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Ծրագիր 4-ի շրջանակներում Մ2,Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի մաս հանդիսացող Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի ելք (կմ 10+650- կմ 42+875, Լոտ 1) և նախատեսվող Քաջարանի թունելի մուտք – Սիսիան-Քաջարան հատվածի նախատեսվող նոր խաչմերուկ (կմ 0+000 – կմ 10+650, Լոտ 2), այդ թվում՝ Քաջարանի թունել (երկարությունը մոտ 7 կմ), ճանապարհահատվածի կառուցման նպատակով ՀՀ Սյունիքի մարզի տարածքում մի շարք տարածքներ հանրության գերակա շահ ճանաչելը:

Ծրագրի իրականացման շահը գերակայում է նշված տարածքների սեփականատերերի շահերի նկատմամբ, քանի որ նպատակաուղղված է հաղորդակցության ոլորտների, մասնավորապես համապետական կարևոր նշանակություն ունեցող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման ճանապարհաշինական ծրագրի իրականացման ապահովմանը:

Նախագծային փաստաթղթերի համաձայն՝ Ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհահատվածի (այդ թվում՝ տեղափոխման ենթակա հաղորդակցուղիների) օտարման գոտու սահմաններում ներառված են ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր, Քաջարան, Տաշտուն, Լիճք, Վարդանիձոր, Գուդեմնիս, Լեհվազ, Մեղրի, համայնքներում գտնվող ընդհանուրը 982 միավոր հողամասեր (դրանց որոշ հատվածներ):

Նախագծով առաջարկվում է հաստատել օտարվող սեփականությունների օտարման գոտին և սահմանել, որ

1) օտարվող սեփականության ձեռք բերող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը:

2) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնաժամկետն է 2023 թվականի հունիսի 30-ն է:

3) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմինը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է, որի համակարգման ոլորտների շրջանակը, ի թիվս այլնի ներառում է նաև ճանապարհային ոլորտը:

Նախագծի ընդունման արդյունքում այդ ճանապարհահատվածների կառուցման համար անհրաժեշտ տարածքներն օրենքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ կօտարվեն Հայաստանի Հանրապետությանը:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/706406.html>

07.06.2022 թ.

Կապանում նախատեսվում է կառուցել ոչ ֆորմալ կրթական հաստատություն՝ COAF-ի սմարթ կենտրոն

Նախատեսվում է Կապան խոշորացված համայնքում կառուցել սմարթ կենտրոն, որն առաջարկում է ոչ ֆորմալ կրթություն: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին ասաց ՀՀ ԿԳՄՄ փոխնախարար Ժաննա Անդրեասյանն ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում ՀՀ 2021 թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկմանը՝ անդրադառնալով պատգամավորների հարցերին:

Փոխնախարարը նախ խոսեց Կապանի ծրագրի մասին: Ծրագրի շրջանակում պետությունն ուսումնասիրել է 31 գյուղական բնակավայրերում շահառու երեխաների թիվը՝ թե նախադպրոցական, թե դպրոցական տարիքի երեխաներին, բնակավայրերի հեռավորությունը, տեղանքը, շենքերի վիճակը: Եվ այդ ուսումնասիրության արդյունքում 13 կրթահամալիրներում նախատեսվել է կազմակերպել կրթություն, որը թե նախադպրոցական, թե դպրոցական մակարդակի, թե լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վայր է լինելու:

Փոխնախարարի խոսքով՝ կա հնարավորություն՝ ավելացնելու ոչ ֆորմալ կրթության բաղադրիչը: «ԵՄ-ի ծրագրերի շրջանակներում քննարկվում է նաև Կապան խոշորացված համայնքում COAF-ի՝ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից սմարթ կենտրոնի կառուցման հնարավորությունը», - ասաց Անդրեասյանը:

Լոռու Դեբեդ համայնքում գործում է այդպիսի կենտրոն, որը փոխնախարարը համարում ոչ ֆորմալ կրթության շատ լավ միջավայր: Այն 27 տարբեր բնակավայրից շուրջ 2000 երեխաների առաջարկում է տարբեր դասընթացներ, ընդգրկված են նաև նախադպրոցական տարիքի երեխաները: «Նմանատիպ կենտրոն կունենանք Կապան խոշորացված համայնքում: Եվ մեր ֆորմալ կրթության ծրագիրը, միանալով ոչ ֆորմալ կրթության այս միջավայրին, մի ամբողջ էկոհամակարգ կձևավորի և թույլ կտա, որ ունենանք շատ որակյալ կրթություն», - ասաց փոխնախարարը՝ հավելելով, որ դա ծրագրերից մեկն է, որ քննարկվում է ԵՄ-ի աջակցությամբ:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1085358.html?fbclid=IwAR1XGCRT-5pNY9pLuaqPOkWA6V6vZmgv5XtlR0Hfy7gwqsYvgp2T5EJt4Uk>

07.06.2022 թ.

Հիմնանորոգվում է S-8-22, /Մ-2/-Վարդավանք-Խղրանց-Ագարակ ավտոճանապարհի 13.1 կմ հատվածը

Հիմնանորոգվում է S-8-22, /Մ-2/-Վարդավանք-Խղրանց-Ագարակ ավտոճանապարհի 13.1 կմ երկարությամբ հատվածը (կմ0+000 - կմ13+100): Ճանապարհը գտնվում է Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում:

Այս պահին իրականացվում են հողային, նոր ասֆալտբետոնե ծածկի տեղադրման աշխատանքներ: Կառուցվել են նաև հենապատեր, կիրականացվի ճանապարհի կահավորում, կնորոգվի նաև ճանապարհին առկա երկաթբետոնե կամուրջը: Ծրագրով նախատեսված են նաև այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները կատարում է «Ապառաժ» ՍՊԸ-ն, իսկ տեխնիկական հսկողությունը՝ «Սուֆետ» ՍՊԸ-ն:

Ֆինանսավորումը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից:

Հիմնանորոգումը կավարտվի այս տարվա ընթացքում: Նշենք, որ ըստ պայմանագրի՝ աշխատանքներն ընդունվելուց հետո 3 տարի ճանապարհահատվածը կգտնվի երաշխիքային ժամկետում: Եթե այդ ընթացքում կատարված աշխատանքներում ի հայտ գան թերություններ, կապալառուն իր միջոցներով պետք է վերացնի դրանք:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/armroad.am/posts/5094092350708418>

06.06.2022 թ.

Միսիան-Քաջարան ճանապարհի նախագիծը պետք է դառնա ամենակարևորներից մեկը ՀՀ պատմության. նախարար

ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը խորհրդարանում հայտարարել է, թե Միսիան-Քաջարան ճանապարհի նախագիծը պետք է դառնա Հայաստանի պատմության մեջ ամենակարևորներից մեկը:

Նրա խոսքով, շարունակվում են նաև քննարկումները ԵՄ-ից 2,6 միլիարդ եվրոյի աջակցության փաթեթի շուրջ, սակայն դրա համար կոնկրետ ծրագրեր դեռ կազմված չեն:

Նշենք, որ Հյուսիս-հարավ ծրագրով Միսիան-Քաջարան ճանապարհի կառուցման մեկնարկը տրվել 2021 թվականին:

Աղբյուրը՝ <https://www.24news.am/news/239312>

05.06.2022 թ.

Վախ չկա ոչ մեկի մոտ էլ, ոչ մեկ գյուղից չի հեռացել. Ներքին Հանդի գյուղապետ

Ներքին Հանդ գյուղի ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածք մտած ադրբեջանական զինված ուժերը գյուղում կյանքի համար դժվարություններ չեն առաջացրել, քանի որ հեռու են գյուղից: Այս մասին [NEWS.am](https://www.24news.am/news/239312)-ի հետ զրույցում ասաց Ներքին Հանդի գյուղապետ Խաչատուր Բաղդասարյանը:

«Ադրբեջանական զինված ուժերը գյուղից հեռու են տեղակայված, մեր պաշտպանության նախարարությունը դիրքեր է տեղակայել նրանց դիմաց: Վարդասարի հատվածում իրենք առաջ են եկել հենց պատերազմից հետո, իսկ Բարթազ լեռան հատվածում առաջ են եկել մարտ ամսին: Կրակոցներ չկային, հանգիստ է եղել ընդհանուր առմամբ, մինչև էս վերջին դեպքը, որ վրանում հանգստացող զինծառայողի կրակեցին, մեկ օր անց մահացավ», - ասաց նա:

Խաչատուր Բաղդասարյանը նշեց, որ գյուղում արտագաղթ չկա, բնակիչները չեն վախենում, զբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով. «14 հա մշակել են գյուղից դուրս գյուղի տարածքում էլ տնամերձերում են զբաղվում գյուղատնտեսական աշխատանքներով: Վախ չկա ոչ մեկի մոտ էլ, ոչ մեկ գյուղից չի հեռացել»:

Գյուղապետը նշեց, որ տեղյակ չէ, թե որքան են առաջ եկել եւ անդրադառնալով լրատվամիջոցների հրապարակած տեղեկություններին, թե մոտ 900 հա առաջ են եկել, ասաց, որ առանձին հատվածներում են առաջ եկել եւ չի բացատրվում, որ այդքան լինի տարածությունը:

Նշենք, որ «Սպուտնիկ Արմենիա» կայքից հայտնել էին, որ Ներքին Հանդ գյուղի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերը Ներքին Հանդ- Բարդուղաղք հատվածում առաջ են եկել 9 քառակուսի կիլոմետր կամ մոտավորապես 900 հա: Բացի այդ ադրբեջանական դիրքերը տեղակայված են գերիշխող բարձունքների վրա, ինչը հնարավորություն է տալիս ավելի շատ մեծ տարածք տեսնել:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/705755.html>

02.06.2022 թ.

Եվրոպական ներդրումային բանկը դադարեցրել է Հյուսիս-Հարավ ծրագրի ֆինանսավորումը

Կառավարությունը 3 միլիարդ դրամ կողողի Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման 3-րդ տրանշի կապալառուի պարտքերն ու պարտավորությունները մարելու համար: Ճանապարհի այս հատվածի ֆինանսավորումը պիտի իրականացվեր Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով, որտեղից, սակայն, փոխանցումներ չեն եղել: Հարցը ներառված է կառավարության հունիսի 2-ի նիստի օրակարգում:

Հյուսիս-հարավ ծրագրի 3-րդ տրանշի կապալառուն չինական «Մինտիդրո» ընկերությունն է: Այս տրանշը ընդգրկում է Թային-Լանջիկ, Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածները՝ մոտ 42 կիլոմետր: Ըստ կառավարության որոշման հիմնավորման՝ անցած տարի աշխատանքներն ընթացել են մեծ տեմպերով և արդյունքում աջակողմյան հատվածը բացվել է երթևեկության համար, իրականացվել է հողային աշխատանքների ընդհանուր ծավալի շուրջ 70%-ը, բետոնե կառուցվածքների ընդհանուր ծավալի շուրջ 45%-ը, ասֆալտապատման աշխատանքների 40%-ը: Համաձայն պայմանագրի դրույթների՝ կապալառուն ներկայացրել է միջանկյալ կատարողական ակտեր, որոնց դիմաց պետք է իրականացվեն համապատասխան վճարումներ, սակայն 2021թ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար կապալառուի կողմից ներկայացված և հաստատված կատարողականների դիմաց վճարումներ չեն իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով:

Այդ տրանշի ֆինանսավորումն իրականացվելու էր Եվրոպական ներդրումային բանկի տրամադրած վարկային և դրամաշնորհների միջոցներով: «Համաձայնագրերի շրջանակներում ներկայացվել են վարկային և դրամաշնորհային հաշիվների համալրման ֆինանսավորման հայտեր, որոնք սահմանված կարգով ուղարկվել են Եվրոպական ներդրումային բանկ, դեռևս 2021թ. օգոստոսի 16-ին, սակայն մինչ օրս ԵՆԲ-ի կողմից հաշիվների համալրում) չի իրականացվել», -նշված է որոշման հիմնավորումներում:

Կառավարության կողմից տրամադրվելիք 3 միլիարդ դրամն ուղղվելու է պարտքի մարմանն ու հետագա կատարողականների դիմաց վճարումների կատարմանը: Եվրոպական ներդրումային բանկի հետ համապատասխան վարկային համաձայնագիր կնքվել էր 2013-ին, վարկի ծավալը կազմել էր 60 միլիոն եվրո:

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքը Հայաստանի հյուսիսը հարավին կապող ծրագիր է՝ 556 կիլոմետր երկարությամբ: Ծրագիրը պիտի ավարտվեր 2019-ին, բայց ճանապարհի մեծ մասը դեռ կառուցված չէ: 2018-ի հեղափոխությունից հետո այս ծրագրում միլիարդավոր դրամների հափշտակության դեպքեր բացահայտվեցին, հարուցվեց քրեական գործ, որը ներկայում քննվում է:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3OWekq2>

01.06.2022 թ.

Ադրբեջանը Ներքին Հանդի հատվածում էլի առաջ է եկել 2 ուղղությունով

2022 թ. մարտին գյուղացիները ասացին, որ ադրբեջանական զորքը առաջ է եկել հին գյուղի/գերեզմանի ուղղությամբ (սլաք 1): ՊՆ-ն ասաց, որ 2021 թվականին է եղել, ձմեռը գնացել են, իսկ 2022 թ. հետ են եկել:

N.B. Ճանապարհը դեպի էտ դիրք գցել են 2022 թ. մարտ-ապրիլին:

Բայց դրանով չեն սահմանափակվել:

Սկարում երևում է, որ խորացել են նաև անմիջապես Ներքին Հանդի ուղղությամբ ու ավելի հարավ (դեպի Վարդասար) - սլաքներ 2 ու 3:

P.S. Հիշացնեմ, որ մի քանի ուղղությամբ առաջ են եկել նաև հենց Վարդասարի հատվածում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Aeternum7/posts/10221206715494342>

Կազմող՝ Ս. Ալավերդյան